ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«27»փետրվարի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Փետրվարի 27-ին նշվում է ՀԿ-ների միջազգային օրը

Հասարակական կազմակերպությունների, քաղհասարակության հարգելի ներկայացուցիչներ

Անկեղծորեն շնորհավորում եմ բոլորիդ այս կարևոր օրվա առթիվ:

Միաժամանակ գնահատելով Ձեր ակտիվ գործունեությունը՝ շնորհակալական խոսքս եմ հայտնում Ստեփանավան համայնքում գործող բոլոր այն կազմակերպություններին ու անձանց, ովքեր կարևոր ներդրում ունեն մեր համայնքի բարօրության և զարգացման գործում:

Համոզված եմ, որ շարունակական համագործակցությամբ մենք կկարողանանք ավելի արդյունավետ ձևով լուծել համայնքում առաջացած յուրաքանչյուր խնդիր՝ ապահովելով նրա զարգացման կայուն ընթացքը:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր տոնի առթիվ և մաղթում նոր հաջողություններ, համատեղ ջանքերով իրականացված նախագծեր ու նոր ձեռքբերումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ